ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » 2009 թվականի N -Ն

ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵԽՆՈՊԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման 15-րդ կետի 3-րդ ենթակետի համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝
   1) Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2009 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված N 1հավելվածի,
   2) Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2009 թվականի ծրագրի միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 2-ի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀՀ կառավարության 2009
թվականի
….. N -Ն որոշման

2009 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵԽՆՈՊԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության ծրագրի ընդհանուր նկարագիրը

Սույն ծրագիրը հանդիսանալով «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2008 թվականի ծրագրի» շարունակականության ապահովումը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով որդեգրված քաղաքականությունն ու սահմանված ռազմավարական գերակայությունները, և ուղղված է Երևանի ու մարզերի միջև անհամամասնությունների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը:

Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում է Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումն և ներդրումային ակտիվության խրախուսումը, մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճը, համայնքային ենթակառուցվածքների գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը:

Տեխնոպարկի ստեղծումով հնարավորություն կընձեռնվի արտադրական գործընթացներում ընդգրկելու Գյումրի քաղաքի և, ընդհանրապես, Շիրակի մարզի բարձր որակավորման մասնագետներին՝ փոքր ձեռնարկությունների ստեղծման ճանապարհով, նախանշելով դրանց գերակայությունները և զարգացնելով մրցունակ ուղղությունները: Տեխնոպարկի ստեղծման հիմնական խնդիրներից է փոքր ձեռնարկատիրության զարգացման բազմակողմանի աջակցությունը: Քաղաքների և տարածաշրջանների համար Տեխնոպարկերը հանդիսանում են տնտեսական զարգացման խթանման անհրաժեշտ և կարևոր գործիքներ:

Բարեփոխվող երկրներում և, հատկապես, դրանց մարզերում բացակայում են բարձր մակարդակի ենթակառուցվածքները, ամենից առաջ՝ հեռահաղորդակցման ոլորտում: Հաճախ, նույնիսկ լավ հեռահաղորդակցման համակարգի և տեղեկատվական միջավայրի առկայությամբ, բացակայում է այդ ենթակառուցվածքի ամենօրյա գործնական կիրառման մշակույթը: Այդ առումով՝ տեխնոպարկը պետք է հագեցված լինի կապի և հաղորդակցման լավ միջոցներով (ինտերնետային ելքեր, տեղեկատու-որոնման համակարգեր, տեղեկատվական բազաներ, գործնական ուսուցման համապատասխան համակարգեր, զարգացած բիզնես կոնտակտներ, այդ թվում՝ օտարերկրյա կոնտակտներ), որոնց միջոցով կարելի է գտնել գործընկերներ կամ ներդրողներ:

Միաժամանակ, տեխնոպարկերի ստեղծման և արդյունավետ գործունեության կարևոր պայման է հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների շահագրգռվածությունը և ակտիվ մասնակցությունը փոքր ու միջին ձեռնարկատիրության (ինչպես ինովացիոն, այնպես էլ ոչ տեխնոլոգիական) հիմնադրման և հետագա զարգացման փուլերում, ինչն էլ կհանդիսանա նոր աշխատատեղերի ստեղծման և մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևոր ուղղություն:

Տեխնոպարկերի ստեղծման, գործունեության կազմակերպման և հետագա զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև Գյումրի քաղաքի արդյունաբերական ու գիտաարտադրական վիճակի համեմատական վերլուծությունները՝ թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները.

Անառարկելի է տեղական իշխանությունների և պետական կառավարման մարմինների ակտիվ մասնակցությունը Տեխնոպարկի ստեղծման, գործունեության ծավալման և հետագա զարգացման հարցերում,

Տեխնոպարկի ստեղծումը կհանդիսանա Գյումրու և Շիրակի մարզի մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևոր ուղղություն,որը հետագայում հանդիսանալու է Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմք:

Տեխնոպարկը Գյումրի քաղաքի համար իրավամբ կհանդիսանա, որպես տնտեսական զարգացման անհրաժեշտ և կարևոր գործիք,

Տեխնոպարկի կազմակերպական կառուցվածքում բիզնես-ինկուբատորի ներառմամբ՝ Տեխնոպարկը կիրականացնի փոքր ձեռնարկությունների աջակցման ֆունկցիաներ, կխթանի մրցունակ արտադրանքի դուրսբերում ներքին ու արտաքին շուկաներ:

Տեխնոպարկի գործունեության իրականացման համար «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 թվականի ծրագրով» արդեն իսկ իրականացվել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1.Նախապատրաստական փուլի կառավարում միջոցառման շրջանակներում ծրագրի ընդհանուր կառավարման համար ձևավորվել է թիմ, որի կազմում ներգրավել են մասնագետներ՝ ինչպես պետական հատվածից և այլ գործընկեր կազմակերպություններից, այնպես էլ՝ վճարովի խորհրդատուներ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Կրթությամբ զարգացման ակադեմիա ՀԿ-ի կողմից համատեղ իրականացված մրցույթի արդյունքում ընտրվել են 1 միջազգային և 3 տեղական խորհրդատուներ, որոնք մշակել են տեխնոպարկի գործունեության բիզնես պլանը:

Այս միջոցառման իրականացման համար ՀՀ պետական բյուջեից որպես համաֆինանսավորում նախատեսված է եղել 9000000 դրամ, իսկ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից՝ 10000000 դրամ համաֆինանսավորում։

2. Ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ համատեղ միջոցառման շրջանակներում ձևավորման փուլում է գտնվում «Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիան» Եռաչափ մոդելավորման հայկական ասոցիացիայի հետ համատեղ, որտեղ Ասոցիացիան պարտավորվել է կատարել Գյումրիում եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիայի հիմնման և տեխնիկական համալրման, ուսանողների և դասախոսների ընտրության, ուսումնա-մեթոդական ձեռնարկների նախապատրաստման և արտադրական եռաչափ մոդելավորման դասընթացների կազմակերպման աշխատանքները և անհրաժեշտ 17362000 դրամ գումարից 48.3%-ը,այսինքն 8382000 դրամը համաֆինանսավորվել է ՀՀ պետական բյուջեից, իսկ 8980000 դրամը ասոցիացիայի կողմից։ Ձևավորման փուլում է գտնվում նաև «Սան տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիան» Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի, Հայ օգնության ֆոնդի հետ համատեղ, որտեղ Հիմնադրամը պարտավորվել է կատարել Գյումրի քաղաքում ՍԱՆ տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիայի հիմնման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ), որտեղ 21614490 դրամի համաֆինանսավորումը իրականացվել է ՀՀ պետական բյուջեի, իսկ 27695022 դրամը Հայ օգնության ֆոնդի և «Սան Մայքրոսիսթեմսի» համաֆինանսավորմամբ։

3.Դրամաշնորհներ՝ գիտահետազոտական ծրագրերի համար միջոցառման շրջանակներում հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել են երեք գիտահետազոտական ծրագրեր՝

1) «Ֆայվ Դայմենշընս» ընկերության «Նախահաշիվների կազմման և շինարարական կազմակերպության գործունեության վարման և մոնիտորինգի «5D-Construction ծրագրային փաթեթ»» գիտահետազոտական ծրագիրը։ 7500000 դրամ ընդհանուր գումարի 50%-ը համաֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, իսկ 50%-ը կհամաֆինանսավորվի «Երանգ» ՍՊԸ-ի կողմից։

2) «Սայմոտեկ» ՍՊԸ-ի «Ընտանեկան սոնոգրաֆի և նրա հեռահաղորդակցման միջավայրի նախագծում և ծրագրավորում» գիտահետազոտական ծրագիրը։ 12000000 դրամ ընդհանուր գումարի 5980000 դրամը համաֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից,իսկ 6020000 դրամը՝ «Սայմոտեկ» ՍՊԸ-ի կողմից։

3) «Շիրակ Տեխնոլոգիական Ընկերություն» ՍՊԸ-ի «Նացիոնալ ինստրումենտ (National Instrument) սարքերի պլատֆորմի վրա մշակել և պատրաստել փորձանմուշ «Խելացի տուն» մոդելի համար» գիտահետազոտական ծրագիրը։ 14694000 դրամ ընդհանուր գումարի 4164000 դրամը համաֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից,իսկ 10530000 դրամը՝ «ՇՏԸ» ՍՊԸ-ի կողմից։

Ի.ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2009 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

2. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատեու մասին» N 380-Ա որոշումը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին» N 23 արձանագրային որոշումը

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 957-Ն որոշումը:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշումը:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1463-Ն որոշումը:

3. Առաջարկվող ծրագիրը համահունչ է նաև ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի պահանջներին: Մասնավորապես դա վերաբերվում է կետ 1.3-ով և 1.4-ով սահմանված «ԱՌՀԾ-ի վերանայման անհրաժեշտությանն ու Կայուն զարգացման ծրագրի հիմնական գերակայություններին» և «Կայուն զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարական գերակայություններին», որտեղ 64, 66, 69, 73 ենթակետերով սահմանված են հետևյալ միջոցառումները՝

1) նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծումն ու զարգացումը,

2) կայուն զարգացման ծրագրի շրջանակներում ակտիվ տարածքային քաղաքականության մշակումը և իրականացումը, որը նպատակաուղղված կլինի տարածքային զարգացման անհամաչափությունների մեղմմանը և հետ մնացող տարածքների տնտեսական զարգացման արագացմանը,

3) տնտեսական զարգացման ներկայիս խոր անհամաչափությունների հետագա աճի զսպումը՝ ետ ընկնող տարածքների արագացված զարգացումն ապահովող նպատակային տարածքային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով,

4) երկրի մրցունակության աճին ուղղված քաղաքականությունը, որի հիմնական հատկանիշներն են՝ արտադրողականության աճի ապահովման խրախուսումը, միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակների ապահովումը, նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի ստեղծման միջոցով:

4. Նշված միջոցառումները, ինչպես բոլոր գործողությունները, ունեն արդյունքներ:

1) Դրանք են՝

ա. նոր տեխնոլոգիաների ստեղծման խրախուսում և դրանց ներդրում,

բ. գործարարության վարկավորման նոր մեխանիզմների առավել ընդգրկուն կիրառում,

գ. առկա խնդիրների բացահայտում և լուծման համար պայմանների ստեղծում,

դ. Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես, տարածաշրջաններում (մարզերում, համայնքներում) բնակչության զբաղվածության և բարեկեցության բարելավում,

ե. ՓՄՁ-ի սյուբեկտներին աջակցության շարունակականության ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում, համախառն ներքին արդյունքում (այսուհետ՝ ՀՆԱ) ՓՄՁ-ի սյուբեկտների մասնաբաժնի ավելացում:

II.ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Ծրագրի հիմնական նպատակն է թափ հաղորդել Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հավակնոտ ծրագրի իրականացումը՝ պահպանելով նրա ավանդական մշակույթային նկարագիրը, այն դարձնել ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներ ունեցող, գործարար միջավայրի համբավ ունեցող կենտրոնի, որտեղ ներկայացված կլինեն՝ բարձր տեխնոլոգիաներ կիրառող ձեռնարկությունները, խոշոր կրթօջախներն ու գիտահետազոտական կենտրոնները: Գյումրու պարագայում Կառավարությունը մտադիր է խթանել՝ զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն(կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաներ), նորաձևություն և տեքստիլ արդյունաբերություն, արվեստ, ոսկեգործություն, արհեստագործություն ճյուղերը, որոնց հիման վրա Գյումրին կդառնա «տեխնո-քաղաք»: Հաշվի առնելով Գյումրիում ՏՏ-ի ոլորտում ձեռներեցության ներկա անբավարար մակարդակը՝ տեխնոպարկը սերտորեն կաշխատի ՏՏ-ի ոլորտի արտասահմանյան կազմակերպությունների մասնաճյուղերի և տեղական մասնավոր ընկերությունների հետ՝ սկսնակ կազմակերպություններ ու գիտահետազոտական լաբորատորիաներ հիմնելու նպատակով: Այս կազմակերպությունները և գիտահետազոտական լաբորատորիաները որպես խթանիչներ կհանդիսանան Գյումրիում ՏՏ-ի ձեռներեցությունը զարգացնելու, ՏՏ-ի մասնագիտությունների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը մեծացնելու, բարձր վարձատրվող նոր աշխատատեղերի ստեղծելու և Երևանի ռեսուրսներից ՏՏ-ի ընկերությունների կախվածությունը նվազեցնելու համար: Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 թվականի ծրագրով արդեն իսկ ձևավորվել են «Եռաչափ մոդելավորման ուսումնական լաբորատորիան» Եռաչափ մոդելավորման հայկական ասոցիացիայի հետ համատեղ և «Սան տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիան» Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի, Հայ օգնության ֆոնդի հետ համատեղ: Նախատեսվում է, որ այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Նեյշնլ Ինսթրումենթսը» և այլն կհամագործակցեն տեխնոպարկի հետ և կհիմնեն ուսումնական ու գիտահետազոտական լաբորատորիաներ Գյումրիում: Լաբորատորիաները կանցկացնեն ուսումնական դասընթացներ, կիրականացնեն գիտահետազոտական ծրագրեր՝ ստեղծելով անհրաժեշտ միջավայր ապագա սկսնակ կազմակերպությունների համար:Նախատեսվում է նաև ստեղծել հիմնադրամ, որը հնարավորություն կտա գյումրեցի երիտասարդների համար կրթության և վերապատրաստման ծրագրերի իրականացման, ինչպես նաև խթանել

գիտահետազոտական աշխատանքների կատարումն տեխնոպարկում ընդգրկված ճյուղերի գծով։ Այս ծրագրերի իրականացմանը սատարելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակաբար կաջակցի ձևավորված և նոր ձևավորվող ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների ստեղծմանը, ինչպես նաև լաբորատորիաներին կտրամադրի հետազոտական դրամաշնորհներ՝ կադրերի վերապատրաստման, արտադրանքի մշակման և նոր գիտելիքների ձեռքբերման նպատակով։

2. Ծրագրի իրականացման նպատակը տեխնոպարկի միջոցով ինովացիոն համակարգի ձևավորումն է։ Միաժամանակ, տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության ծրագիրն ունի հետևյալ ենթանպատակները՝

1) արտադրական և գիտական սյուբեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների ինտեգրում և ակտիվացում՝ մարզի ու հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացման համար.

2) շուկայական տնտեսության այնպիսի մեխանիզմների ձևավորմանը, որոնք կխթանեն մրցունակ ապրանքների արտադրությունը.

3) մարզում ՓՄՁ-ի սուբյեկտների ստեղծման ու զարգացման պայմանների և բարենպաստ միջավայրի ձևավորում.

4) առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերմանն աջակցելու նպատակով ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա).

5) գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին՝ հասցեական աջակցության տրամադրում.

6) գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում.

7) օրինակելի նախատիպ հանդիսանալը հանրապետության այլ տարածքներում և մարզերում տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող տեխնոպարկերի և ինկուբատորների ստեղծման համար.

8) գիտական մշակումների առևտրականացում.

9) գիտա-կրթական, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության զարգացում։

3. Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում են՝

1) մարզի տնտեսության աճ,

2) Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական զարգացմանը, տարածքային համաչափ զարգացմանը և աղքատության հաղթահարմանը նպաստելը։

3) նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծում ու զարգացում,

4) արտադրողականության աճի ապահովման խրախուսում,

5) նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի ստեղծում,

6) ուսումնական դասընթացների անցկացում, կադրերի վերապատրաստում,

7) Գիտահետազոտական ծրագրերի իրականացում, գիտահետազոտական դրամաշնորհների տրամադրում։

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվում է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ՝ որպես պետական աջակցություն տեխնոպարկում ներգրավված և դրա գործունեության արդյունքում ձևավորվելիք կազմակերպություններին։

IV. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Տեխնոպարկի գործունեության իրականացման համար նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) Տեխնոպարկի գործունեության կառավարում-տեխնոպարկի կառավարման գրասենյակի ձևավորում մշակված բիզնես-պլանի հիմքի վրա, որն էլ կիրականացնի տեխնոպարկի կառավարումը։

2) «Գյումրի տեխնոպարկ, Ռազմավարական ուղեցույց և բիզնես պլան» փաստաթղթից բխող միջոցառումների և ծրագրային պլանների մշակում, որտեղ կներառվեն տեխնոպարկի վերաբերյալ գործառնական և ֆինանսական բոլոր մանրամասները, ինչպես նաև զարգացման ուղղությունները և ռազմավարությունը։

3) տեխնոպարկի կառավարման գրասենյակը տեխնոպարկում ներդրումներ ներգրավելու համար պետք է իրականացնի համապատասխան աշխատանքներ օտարերկրյա ներդրողների շրջանակներում։ Թիրախ կհանդիսանան հատկապես տեխնոպարկում ընդգրկված ոլորտներում միջազգային ճանաչում ունեցող ընկերությունները։

4) տեխնոպարկի գործունեության իրականացման համար սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է ֆինանսավորում ծրագրի հետևյալ բաղադրիչներին՝

ա.տեխնոպարկի գործունեության կառավարում

Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է ձևավորել տեխնոպարկի կառավարման գրասենյակ՝ գրասենյակային գործունեության ծրագրի նախապատրաստում, կառույցի հիմնում,աշխատավարձեր և պահպանման ծախսեր։

բ. ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում և զարգացում՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ

Ծրագիրը կհամագործակցի իր գործընկերների հետ՝ գիտահետազոտական և ուսումնական լաբորատորիաների ստեղծման գործում։ Նպատակը մի շարք գործընկերների հետ, օրինակ «Մայքրոսոֆթ», «Նեյշնլ Ինսթրումենթս», «Սան Մայքրոսիսթեմս», «Սինոփսիս» և այլն, համատեղ լաբորատորիաներ հիմնելն է։

գ. դրամաշնորհներ՝ գիտահետազոտական ծրագրերի համար

Գիտահետազոտական աշխատանքների և սկսնակ կազմակերպությունների զարգացումը խթանելու նպատակով ծրագիրը կտրամադրի հատուկ գիտահետազոտական դրամաշնորհներ, որոնք մրցութային կարգով կհատկացվեն Գյումրիում գործող գիտահետազոտական լաբորատորիաներին և սկսնակ կազմակերպություններին։

դ. Հիմնադրամի հիմնում

Հիմնադրամի ստեղծումը հնարավորություն կտա գյումրեցի երիտասարդների համար կրթության և վերապատրաստման ծրագրերի իրականացման, ինչպես նաև խթանել գիտահետազոտական աշխատանքների կատարումն Տեխնոպարկում ընդգրկված ճյուղերի գծով։ Նախատեսվում է որևէ ամերիկյան կամ եվրոպական

համալսարանի հետ կնքել համագործակցության պայմանագիր։ Տարեկան 30 գյումրեցի երիտասարդներ կընտրվեն և հիմնադրամի ֆինանսավորմամբ կուսուցանվեն կամ կվերապատրաստվեն տվյալ համալսարանում և կստանան գիտությունների թեկնածու (Phd) գիտական աստիճան։ Հիմնադրամի միջոցով նախատեսվում է նաև իրականացնել գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեյով որպես ծրագրի իրականացմանը պետական աջակցության կողմնորոշիչ չափաքանակ է սահմանվել 80.000.0 հազար դրամ։

2. Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2009 թվականի ծրագիրը կֆինանսավորվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵԽՆՈՊԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2009 թվականի սույն ծրագիրը մշակվել է համաձայն ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» 25 դեկտեմբերի 2008 թվականի N 1573-Ն որոշման։

Ծրագրի մշակման և իրականացման հիմք են հանդիսացել նաև ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության

կառավարության ծրագիրը հաստատեու մասին» N 380-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին» N 23 արձանագրային որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 957-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1463-Ն որոշումը։

Ծրագրի ընդունման և իրականացման նպատակն է ապահովել Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացումը՝

1. Այս նպատակների արդյունավետ իրականացման համար նպատակահարմար է համարվում նախ և առաջ ձևավորել տեխնոպարկի կառավարման գրասենյակ, որը մշակված բիզնես պլանի հիման վրա իրականացնելու է տեխնոպարկի կառավարումը։ Տեխնոպարկի գործունեության կառավարման գրասենյակի համար, որպես ֆինանսավորում նախատեսված 25000000 դրամ գումար, որը նախատեսված է գրասենյակի կանոնավոր գործունեության ապահովմանը՝ աշխատավարձ աշխատողներին, վարձավճար։

«Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության 2008 թվականի ծրագրի նախապատրաստական փուլի կառավարում միջոցառման իրականացման արդյունքում արդեն իսկ մշակվել է տեխնոպարկի զարգացման բիզնես պլանը, որը ներառում է տեխնոպարկի վերաբերյալ գործառնական և ֆինանսական բոլոր մանրամասները։ Կիրականացվի Տեխնոպարկի արդյունավետ գործունեության համար տարածքների և ներգրավված կառույցների ընտրություն,

ինչպես նաև Տեխնոպարկի կազմում ընդգրկված կառույցների միջև անհրաժեշտ հեռահաղորդակցության ցանցի և Տեխնոպարկի վեբ կայքի նախագծում։

2.Կառավարությունը կֆինանսավորի նաև ծրագրի ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում և զարգացում՝ տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ միջոցառմանը,որի համար նախատեսված է 25000000 դրամ գումար։

3. Ինչպես նաև կտրամադրի գիտահետազոտական դրամաշնորհներ՝ կադրերի վերապատրաստման, արտադրանքի մշակման և նոր գիտելիքների ձեռքբերման նպատակով, որի համար նախատեսված է 20000000 դրամ գումար։

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1463-Ն որոշման շրջանակներում նախատեսված է նաև ֆինանսավորում «Հիմնադրամի ստեղծում» միջոցառմանը՝ 10000000 դրամ գումար։

Ծրագիրն իրականացվելու է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ և համատեղ ներդրված և ներգրավված միջոցներով, որի շուրջ արդեն իսկ առկա են մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝ ոլորտի տեղական և միջազգային կազմակերպությունների հետ։ Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մի շարք քննարկումներ՝ այդ թվում Գյումրիում։

Ծրագրով սահմանվող դրամաշնորհների հատկացումը իրականացվելու է համաձայն 24.12.2003թ. N1937-Ն «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» որոշման՝ մրցութային սկզբունքով։ Իսկ յուրաքանչյուր ծրագրի համար նախատեսվող դրամային չափաքանակները կսահմանվեն համապատասխան մրցութային հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ծրագրի ծավալն ու դրա համապատասխանությունը տեխնոպարկի գործունեության նպատակներին։